

ՀՅԴ Հայ Դատի առաքելության համար Գանատայի արեւմտեան շրջանին մէջ գոյացաւ 120 հազար տոլար



Կարդալ էջ 4

Քեպէզի ընտրութիւններուն խորհրդարանի անդամ ընտրուեցան հայ թեկնածուներ Միշէլ Սեթլաքուի, Սելին Հայթայեան եւ Սոնա Լախոյեան



Կարդալ էջ 3

Մոնթրէալի մէջ կայացաւ ատրպէճանական բռնութիւններն ու յարձակումը դատապարտող բողոքի հաւաք



Կարդալ էջ 5

Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեան հանդիպեցաւ NDP կուսակցութեան ղեկավար Ճակմիդ Սինկի հետ



Կարդալ էջ 4

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը մեծ ցաւով գուժում է նուիրեալ դաշնակցական Շաղիկ Մարուխեանի մահը

Հաւատարիմ հօր եւ Դաշնակցութեան մեծ ընտանիքի որդեգրած ուղեգծին՝ Շաղիկ Մարուխեանը մշտապէս եղել է անկախ Հայաստանի զինուորը։ Արցախում, Հայ Օգնութեան Միութեան բարսերիական ծրագրերում, ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան օրգան «Երկիր» պաշտօնաթերթում (հանդիսացել է թերթի խմբագիրը)։

Կարդալ՝ էջ 8:



Թորոնթոյի մէջ կայացաւ Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ի 50-րդ պատգամաւորական ժողովը



Կարդալ՝ էջ 8:

YES YOU CAN

Introducing,
The All-New HR-V



CONTACT US FOR
MORE INFORMATION

**KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN**

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 321-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Թորոնթոյի մէջ ինքնաշարժներով երթ՝ դատապարտելու Ազրպէյճանի յարձակումները

Մեր ինքնիշխանութիւնն ու լինելութիւնը կը գտնուին լրջագոյն սպառնալիքներու դիմաց: Հայաստանի Հանրապետութեան դէմ ազրպէյճանական ոտնձգութիւնները կ'աճազանգեն, որ ազգովին մեր միասնական ուժը վերաիմաստաւորելու հրամայականին տակ կը գտնուինք: Հայաստանի դէմ ազրպէյճանական յարձակողապաշտութիւնը կը սպառնայ մեր պետականութեան անվտանգութեան՝ նոր պատերազմով մը: Սակայն աշխարհը լուռ է դարձեալ, ինչպէս լուռ մնաց 44-օրեայ պատերազմին:

Այս օրհասական հանգրուանին, Կիրակի, 2 Հոկտեմբերին, յետմիջօրէի ժամը 2ին, Օնթարիոյի Հայկական Միացեալ Խորհուրդը ինքնաշարժներով արշաւ կազմակերպեց, իրազեկելու համար օնթարիոցիները, որ անոնք իրենց կարգին մղեն Գանատայի կառավարութիւնը միջամտելու եւ դատապարտելու թշնամիին ոտնձգութիւնները:

Հարիւր ինքնաշարժներ, Հայաստանի եւ Արցախի դօշներով ծածկուած, հաւաքուեցան Հայ Երիտասարդական Կեդրոն, ուրկէ մեկնարկը տրուեցաւ ինքնաշարժներով երթին: 100 ինքնաշարժներ շրջեցան North York շրջանին մէջ, անցան Don Valley North շրջանի դաշնակցային երեսփոխան՝ Han Dongի գրասենեակէն:

Գանատական Global News հեռուստաընկերութիւնը ներկայ էր արշաւին: Անոնք զրոյց մը ունեցան Հայ Կեդրոնի նախագահ Վահան Աճէմեանի հետ: «Համայնքի զօրակցութիւնը բացառիկ էր. կը սպասենք, որ ընտրուած քաղաքական մեր պաշտօնատարները եւ Գանատայի Կառավարութիւնը աւելի վճռական կեցուածք որդեգրեն: Հայաստանը փխրուն ու նոր ժողովրդավար երկիր է, պէտք է զօրակցինք երբ դրացի վայրագ բռնապետութիւն մը կը ներխուժէ ինքնիշխան երկիր մը: Իբր գանատացիներ, այս մէկը անընդունելի է մեզի համար», յայտնեց Աճէմեան:

Նշենք, որ Ազրպէյճանի յարձակումները դատապարտելու պահանջով նամակներ պիտի յանձնուին հետեւեալ դաշնակցային երեսփոխաններուն՝ Han Dong, Jean Yip, Mary Ng, Paul Chiang, Michael Coteau, Eli ehsassi:

Այսպէս, Օնթարիոյի Հայկական Միացեալ Խորհուրդը վերահաստատեց, որ իր ներուժը ի սպաս պիտի դնէ մեր հայրենիքի գոյատեւումին եւ որ պատրաստ է զօրաշարժի որեւէ վարկեանի:

Հայ ռազմագերիները գնդակահարելու տեսանկիւն վերաբերեալ Հայաստան դիմումներ պիտի ուղարկէ միջազգային դատարաններ

Ազրպէյճանցի զինուորականներու կողմէ հայ ռազմագերիներու գնդակահարութեան տեսանկիւն առիթով Պաքուի դէմ դիմումներ պիտի ներկայացուին Եւրոպական եւ ՄԱԿ–ի Արդարադատութեան միջազգային դատարաններ: «Արմէնփրես»–ի հաղորդումով՝ Դիմատետրի իր էջին վրայ կատարած գրառումով այս մասին տեղեկացուցած է Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի մամլոյ բանբեր Յասմիկ Սամուէլեան:

«Ի պատասխան բազմաթիւ զանգուածային լրատուամիջոցներու ներկայացուցիչներու զանգերուն եւ հաղորդագրութիւններուն. Միջազգային իրաւական հարցերով ներկայացուցիչի գրասենեակը կը զբաղի այսօր առաւօտեան թելեկրամեան ալիքներով տարածուած տեսանիւթով, ուր կ'երեւի հայ գերիներու գնդակահարութիւնը: Ասիկա փաստացի պատերազմական յանցագործութիւն է: Կը տեղեկացնեմ, որ այս պահուն կ'աշխատինք համապատասխան կառոյցների հետ: Փաստերու համադրումով եւ յստակ ապացոյցներով ուղեկցուած նիւթերով, առաւօտեան Ազրպէյճանի դէմ նոր դիմումներ պիտի ներկայացնենք եւրոպական եւ ՄԱԿ–ի Արդարադատութեան միջազգային դատարաններ», գրած է Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի մամլոյ բանբերը:

Նշենք, որ Հոկտեմբեր 1–ին, համացանցի վրայ տարածուեցաւ տեսանիւթ մը, ուր ատրպէյճանական բանակի զինուորներ կը գնդակահարեն գերեվարուած 6 հայ զինուորներ:

Քեպէգի նահանգային ընտրութիւններուն խորհրդարանի անդամ ընտրուեցան Միշէլ Սեթլաքուի, Սելին Հայթայեան եւ Սոնա Լախոյեան

Հոկտեմբեր 3–ին կայացած Գանատայի Քեպէգ նահանգի խորհրդարանական ընտրութիւններուն իրենց թեկնածութիւնը առաջադրած երեք հայ թեկնածուներ՝ Միշէլ Սեթլաքուի (Parti Libéral du Québec), Սելին Հայթայեան (Coalition Avenir Québec) եւ Սոնա Լախոյեան (Parti Libéral du Québec) յաղթանակ արձանագրեցին եւ ընտրուեցան Քեպէգի խորհրդարանի անդամ:

www.horizonweekly.ca

Թորոնթոյի «ՆՈՐ ԶԱՅ ԶՈՐԻՉՈՆ»
յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոյ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:

Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M9 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	kabawat FOR CONTRACTING (437) 213-2999 13 Kerrison Drive West Ajax, Ontario L1Z 1K1
ARZ fine foods The Essence of Mediterranean Gourmet Since 1989 Website: arzfinefoods.com Email: info@arzfinefoods.com Scarborough Location 1909 Lawrence Ave E, Scarborough, ON M1R 2Y6 (416) 755-5084 Mississauga Location 720 Bristol Rd W, Mississauga, ON L5R 4A5 (905) 502-9292	Haroot Sepan T +1 (416) 900 8626 F +1 (416) 900 8659 C +1 (416) 939 1895 haroot@araratfoods.com www.araratfoods.com Ararat Trading (2002) Corp 5820 Kennedy Rd Mississauga, ON L4Z 2C3 CANADA	hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	I.D.A. Part of the "Recip" family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian	Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048
ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164		

ՀՅԴ Հայ Դատի առաքելութեան համար Գանատայի արեւմտեան շրջանին մէջ գոյացաւ 120 հազար տոլար

ՀՅԴ Վանգուվըրի «Սիմոն Վրացեան» կոմիտէի եւ Գանատայի Հայ Դատի արեւմտեան շրջանի յանձնախումբի նախաձեռնութեամբ, Շաբաթ, 1 Հոկտեմբեր 2022ի երեկոյեան ժամը 7ին, Վանգուվըրի Հայ կեդրոնի «Լազարեան» սրահէն նէրս տեղի ունեցաւ «Յանուն Հայրենիքի եւ Հայ Դատ»ի խորագրեալ հաւաքը, ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ եւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Յակոբ Տէր Խաչատուրեանը՝ ներկայացնելու օրուան պատգամը:



Հատուրեանի եւ ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկեր Ռաֆֆի Տօնապետեանի ներկայութեամբ:

Երեկոյի հանդիսավարն էր ընկ. Մեղրիկ Զափանեան: Նախ մէկ վայրկեան յոտնկայս յարգուեցաւ յիշատակը

պարտականութեան ճամբուն վրայ նահատակուած Հայ զինուորներուն, ապա երեկոն սկիզբ առաւ Գանատայի եւ Հայաստանի զոյգ օրհներգներով, ջութակի նուագակցութեամբ Արայիկ Զաբանեանի եւ դաշնամուրի կատարողութեամբ Վարդ Տէր Յակոբեանի:

Հանդիսավար Զափանեան իր բացման խօսքին սկիզբը անդրադարձաւ Հայաստանի եւ Հայ ժողովուրդի դիմադրուած նոր դժուարութիւններուն եւ ցեղասպանական նոր սպառնալիքի մը եզրին գտնուելու վտանգին մասին, որուն առջըք առնելու միակ միջոցը համընդհանուր ուժերով պայքարն է: Ապա ընկերուհին հրաւիրեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Յակոբ Տէր Խաչատուրեանը՝ ներկայացնելու օրուան պատգամը:

Բիւրոյի ներկայացուցիչը ընդհանուր աւելարկով մը անդրադարձաւ Հ.Յ.Դաշնակութեան համաշխարհային գետնի վրայ ծաւալած Հայ Դատի հսկայ աշխատանքին: Ապա բացայայտեց նախորդ երկու տարիներուն ընթացքին Հայաստանի եւ Արցախի մէջ տեղի ունեցած մտահոգիչ իրադարձութիւնները: Ան շեշտեց, որ գործող իշխանութեան անպատասխանատու քայլերուն պատճառով, Հայաստանն ու Արցախը, որոնք տասնամեակներ անսասան կը դիմակայէին թշնամիի սպառնալիքներուն, այսօր



ազգակործան զիջումներու դէմ յանդիման կը գտնուին:

Ան խօսեցաւ նաեւ ներկայ իշխանութեանց ճախողութիւններուն պատճառած ռազմահոգեբանական ընկճուածութեան մասին, որուն պատճառով այսօր մեր քաջարի բանակը կը տուժէ: Այս բոլորը հետեւանքն էին ապրիլար իշխանութեան բանակը տկարացնելու միտումնաւոր քաղաքականութեան: Ան շեշտեց նաեւ այն իրողութիւնը, որ Հաւաքային Կովկասի մէջ թուրք-ատրպէյ-ճանական համաթուրանական ծրագիրները այսօր լուրջ սպառնալիք են Հայաստանի եւ արցախահայութեան անվ-

տանգութեան եւ գոյութեան:

Բիւրոյի ներկայացուցիչի խօսքէն ետք բեմ հրաւիրուեցաւ Հայաստանի հանրապետութեան արուեստի վաստակաւոր գործիչ, երաժիշտ ու երգահան Արմէն Մարտիրոսեան, որ հանդէս եկաւ իր ստեղծագործութիւններէն հանրածանօթ քանի մը կտորներով:

Ապա խօսք առաւ ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկեր Ռաֆֆի Տօնապետեան, որ զեկուցեց Հայ Դատի կազմակերպական աշխատանքներուն մասին եւ ներկայացուց վերջին շրջանին իրագործուած բոլոր գորակցական աշխատանքները գանազան շրջաններու մէջ:

Երեկոյի աւարտին հարց ու պատասխանի առիթ տրուեցաւ, որոնց պատասխանեց ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ եւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը:

Օրուան յայտագիրը փակեց Վանգուվըրի հոգեւոր հովիւ Հոգ. Տ Գարեգին Վրդ. Շիրազեան, որ դրուատեց Հայ Դատի գծով Դաշնակցութեան տարած աշխատանքը:

«Յանուն Հայրենիքի եւ Հայ Դատ»ի խորագրեալ հանդիսութեան ընթացքին Հայ Դատի աշխատանքներուն ի նպաստ եղան սրտաբուխ նուիրատուութիւններ, որոնցմէ գոյացած գումարը հասաւ 120 հազար տոլարի:

Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեան հանդիպեցաւ Գանատայի NDP կուսակցութեան ղեկավար Ճակմիդ Սինկի հետ

Հոկտեմբեր 1-ին, ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանն ու Հայ Դատի Արեւմտեան Գանատայի պատուիրակութիւնը Վանգուվըրի մէջ յատուկ հանդիպում ունեցան Գանատայի Նոր Ժողովրդավար կուսակցութեան (NDP) ղեկավար Ճակմիդ Սինկի հետ: Հանդիպման ընթացքին արծարծուեցան Հայաստանի եւ Արցախի այսօրուան իրավիճակի հարցերը:

ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեան յատկապէս անդրադարձաւ Հայաստանի այսօրուան ճգնաժամին մասին եւ շեշտեց, որ Նոր Դեմոկրատ կուսակցութիւնը ճնշում բանեցնէ Օթթաուայի կառավարութեան վրայ, որպէսզի խստիւ դատաւարտուին Ատրպէյճանի յարձակողապաշտ վարքագիծը Հայաստանի հանդէպ: Արցախի հարցով, նոյնպէս շեշտադրում կատարուեցաւ Մինսկի խումբի ծիրէն ներս Արցախի կարգավիճակի հարցը լուծելու եւ արցախահայութեան անվտանգութիւնը ապահովելու մասին: Գանատահայութեան պարագային, Հայ Դատի պատուիրակութիւնը գնահատեց Նոր Ժողովրդավար կուսակցութեան հետ երկարամեայ համագործակցութիւնը, դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Հանդիպումներու ընթացքին Հայ Դատի պատուիրակութեան մաս կը կազմէին Հայ Դատի Գանատայի Արեւմտեան շրջանի անդամներ՝ Վահէ Անտոնեան, Մեղրիկ Զափանեան եւ Էտի Փափազեան:

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview • Fairview Mall Pointe Claire 514 695 2555 • VIZUALIS.CA	Danièle Papazian, MSc. Courtier immobilier C 514.234.6799 dpapazian@remax-quebec.com www.remaxducartier.com RE/MAX DU CARTIER Agence immobilière 1290, rue Bernard Ouest, bureau 100 Outremont Qc H2V 1V9 T 514.271.2131
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	Pâtisserie MAHROUSÉ FONDÉE EN 1970 9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2 Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca	Seta TOPOUZIAN Conseillère municipale de Renaud Stéphane BOYER Maître de Laval 514 862-1402 s.topouzian@laval.ca
RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc. Pharmaciens-propriétaires 3915, Boulevard Samson Laval, QC H7W 2G1 T 450 688-4111 F 450 681-5525 Lun. au vend. : 8h30 à 21h Sam. et dim. : 9h à 17h Infirmière (jeudi) : 8h30 à 15h LIVRAISON GRATUITE membre affilié à Proxim

Մոնթրեալի մէջ կայացաւ ատրպէյճանական բռնութիւններն ու յարձակումը դատապարտող բողոքի հաւաք

24 սեպտեմբերի կէսօրուան ժամը 12:00–ին, Քեպէզի Հայ Համայնքի Միացեալ Մարմնի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ բողոքի ցոյց մը, Մոնթրէալի parc Marcelin–Wilson–ի մէջ, Հայոց Ցեղասպանութիւնը խորհրդանշող յուշարձանին մօտ, ուր զետեղուած էին Արցախի, Հայաստանի, Գանատայի եւ Քէպէքի դրօշները:

Ցոյցի ամբողջ տեւողութեան, ցուցարարներ ճամբէն անցնող քաղաքացիներու ուշադրութիւնը գրաւելու համար՝ ֆրսանսերէն եւ անգլերէն գրութիւններով Ատրպէյճանի արարքները դատապարտող պատառներ պարզած էին:

Բացման խօսքով հանդէս եկաւ, Պելլա Ղարիպեան, որ ամփոփ տողերու մէջ ներկայացնելէ ետք, Քեպէզի Հայ Համայնքի Միացեալ Մարմինը, յայտնեց, թէ հաւաքի անունով կոչ կ'ուղղուի Գանատայի կառավարութեան՝ անյապաղ դատապարտելու եւ պատժելու Ատրպէյճանը՝ Հայաստանի Հանրապետութեան դէմ պատերազմ նախաձեռնելուն համար: Ան հրաւիրեց Արիանէ Թասլաքեանը, փոխանցելու օրուան պատգամը անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Նոյն պատգամի հայերէն տարբերակը ներկայացուց Սիլվա Պաքարեան: Պատգամաբերները յստակօրէն շեշտեցին թէ ատրպէյճանական յարձակումներու թիրախ դարձած են հայկական Գորիս, Սոթք, Զերմուկ, Վարդենիս, Կապան քաղաքներն ու գիւղերը ինչպէս նաեւ յարակից 37 գիւղեր ու քաղաքացիական ենթակառուցուածքները: Պատգամաբերները նշեցին, թէ հայկական կողմէն կան զոհուածներ, մեծ թիրւով վիրաւորներ, ինչպէս նաեւ զերեկորուածներ: Անոնք աւելցուցին, թէ Զերմուկը ջերմային ջուրերու քաղաք է եւ խմելու ջուր կը մատակարարէ յարակից քանի մը համայնքներու: Հետեւաբար, Զերմուկի ջրամբարներու վրայ յարձակումները կ'ունենան մարդկային եւ բնապահպանական աղետալի հետեւանքներ:

Քեպէզի Հայ Համայնքի Միացեալ Մարմնի սոյն պատգամով, ցուցարարներու անունով կոչ ուղղուեցաւ Գանատայի կառավարութեան՝ ռազմական եւ ֆինանսական պատժամիջոցներ կիրառելու Ատրպէյճանի դէմ, այնպէս ինչպէս ըրած է Գանատայի կառավարութիւնը Ռուսաստանի դէմ, Ուքրանիոյ պատերազմի բովէն ներս, պահանջելով նաեւ, որ Օթթաուան Հայաստանի բնակչութեան ցուցաբերէ այն նոյն աջակցութիւնը, որ Գանատան կատարած էր Ուքրանիոյ ժողովուրդին:

Ապա խօսք առաւ Մեթր Վրոյր Մուղալեան, որ անդրադարձաւ վարչապետ Թրուտոյի 21 սեպտեմբեր 2022–ին կատարած յայտարարութեան, որուն առաջին բաժինն մէջ, եթէ գնահատելի էր Հայաստանի Հանրապետութեան անկախութեան առթիւ արտասանուած ջերմ խօսքերը, ապա հարցադրումի տակ կարելի էր առնել իր կեցուածքը, յայտարարութեան վերջին բաժինով, երբ անդրադառնալով տեղի ունեցած վերջին իրադարձութիւններուն, վարչապետ Թրուտոյի խօսքերը կը սահմանափակուէին միայն նշելով, թէ Գանատան կ'աջակցի հրադադարի եւ խաղաղաւորութեան ջանքերուն: Զեկուցաբերը յայտնեց, թէ կ'ուզէ հաւատալ, որ վարչապետը ապատեղեկացումներ կ'ունենայ իրադրութեան մասին, որովհետեւ իրադրութեան փոփոխութիւնները կ'ազդեն իրադրութեան վրայ:

Սոյն խօսքերը կը սահմանափակուէին միայն նշելով, թէ Գանատան կ'աջակցի հրադադարի եւ խաղաղաւորութեան պահպանման դիւանագիտական ջանքերուն: Զեկուցաբերը յայտնեց, թէ կ'ուզէ հաւատալ, որ վարչապետը ապատեղեկացումներ կ'ունենայ իրադրութեան մասին, որովհետեւ իրադրութեան փոփոխութիւնները կ'ազդեն իրադրութեան վրայ: Զեկուցաբերը յայտնեց, թէ կ'ուզէ հաւատալ, որ վարչապետը ապատեղեկացումներ կ'ունենայ իրադրութեան մասին, որովհետեւ իրադրութեան փոփոխութիւնները կ'ազդեն իրադրութեան վրայ:

Յաջորդ զեկուցաբերն էր Թամար Շահինեան, որ յայտնեց, թէ 44–օրեայ պատերազմէն ետք, 5000 կտրիճներու արիւնը տակաւին թաց է գետնի վրայ, եւ թէ Ատրպէյճանի բռնագրաւած տարածքներուն մէջ, կը շարունակուի ծայր առած մշակութային ցեղասպանութիւնը, կոտորելով հայկական յուշարձանները, եկեղեցիները, գերեզմանները: Ան նշեց, թէ օգտագործելով իրենց բանակի յառաջացած արհեստագիտութիւնը եւ օգտուելով մանաւանդ միջազգային հանրութեան լուրթենէն, Ատրպէյճանն ու Թուրքիան ձեռք–ձեռքի տուած կ'աշխատին ամէն հանգրուանի կորզել Հայաստանէն հողեր: Ան ողջունեց բոլոր գանատացի քաղաքական գործիչները, որոնք կը դատապարտեն Հայաստանի դէմ Ատրպէյճանի գործած յարձակումները եւ կոչ ուղղեց Գանատայի կառավարութեան միջոցներ ձեռնարկելու, որպէսզի Ատրպէյճանը պատասխանատուութեան ենթարկուի իր կատարած յանցագործութիւններուն եւ միջազգային օրէնքները խախտած ըլլալուն համար:

Ապա խօսք առաւ Սարո Շիշմանեան, որ նշեց, թէ մարդկային թէ հողային կորուստներու, դաւաճանութեան եւ միջազգային անտարբերութեան իբրեւ արդիւնք՝ բարբարոսական բռնութիւնն է, որ կը հաստատուի: Դժբխտաբար, ոչ ոք կը հասկնայ հայուն ցաւն ու տառապանքը: Ո՞րք են արդեօք աշխարհի բոլոր մեծ պետութիւնները. անոնցմէ իւրաքանչիւրը պահանջ մը ունի Հայաստանէն: Իսկ Հայաստանի պահանջը բոլորէն մէկ է՝ թողել, որ հայ ժողովուրդը ապրի խաղաղ իր պապեանական հողի վրայ:

Սարո Շիշմանեան յայտարարեց, թէ մեծ պետութիւնները իրենց լուրթեամբ մեղսակից են թուրք–ազերիական բարբարոսութեանց, եւ իրենց ձեռքերը նոյնքան արիւնաթաթախ են, որքան ազերիները կամ թուրքները, այդ մէկը ըլլայ անօդաչու սարքեր ուղարկելով դէպի Թուրքիա եւ Ատրպէյճան, կամ զերազսելով Պաքուի նաւթահորերը՝



մարդկային տարրական արդար իրաւունքներու դիմաց:

Զեկուցաբերը իր խօսքը ուղղելով լրատուամիջոցներուն, անդրադարձաւ թէ ինչպէս Գանատան, որ մարդկային իրաւունքներ պաշտպանող երկիր է, կրնայ այդքան միտումնաւոր չփոթել զոհին եւ յանցագործին միջեւ: Ան խիզախաբար յայտնեց, թէ արտասանուած դատարկ խօսքերը պարզապէս կանաչ լոյս կը հանդիսանան Թուրքիոյ եւ Ատրպէյճանին առաւել վայրագութեամբ յարձակելու համար հայկական սահմաններէն ներս: Սարո Շիշմանեան իր խօսքի վերջին բաժինով յայտնեց, թէ հայ ժողովուրդը եւ ողջ աշխարհը պէտք է տեսնէ, թէ Արեւմուտքն ու այլ մեծ պետութիւններ չեն կորսնցուցած իրենց բարոյական կողմնացոյցը եւ կրնան ամուր կանգնել անարդարութեան դէմ: Եւ խօսքը ուղեւոր իր ընկերներուն, ան շեշտեց, թէ ճակատագրական ու օրհասական այս պահերուն պայքարի ոգին բարձր պահելու ենք:

Ապա Պելլա Ղարիպեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր պատգամաբերներուն եւ զեկուցաբերներուն, որոնք արժանացան ցուցարարներու բարձր գնահատանքին ու ծափողջոյններուն: Այնուհետեւ ան բեմ հրաւիրեց Նոր–դեմոկրատական կուսակցութեան (NDP) փոխնախագահ Ալեքսանտր Պուլերիսը: Գանատայի խորհրդարանի անդամ Պուլերիս առաջին հերթին փոխանցեց NDP–ի ղեկավար՝ Jagmeet Singh–ի ցաւակցական խօսքերը վերջերս արձանագրուած իրադարձութիւններու լոյսին

տակ, ապա ըսաւ, թէ Ատրպէյճանն ու Թուրքիան միշտ պատեհ առիթներ կը փնտենեն յարձակումներ կատարելու հայկական տարածքներէ ներս. սակայն անոնք այսուհետեւ պիտի չյաջողին որովհետեւ պիտի հետեւինք իրադարձութիւններուն, պիտի պաշտպանենք Հայաստանի Հանրապետութիւնն ու հայ ժողովուրդի ապահովութիւնը, պաշտպանելով խաղաղութիւնն ու արդարութիւնը: Ան կոչ ուղղեց Գանատայի արտաքին գործոց նախարարութեան՝ տէր կանգնելու այն բոլոր արժէքներուն, զորս որպէս քեպէզցիներ եւ գանատացիներ կը գնահատենք եւ կոչ ուղղեց Գանատայի դաշնակցային կառավարութեան կատարելու աւելին, դատապարտելով ատրպէյճանական նախադարձակումները, նաեւ քաղաքական, տնտեսական, առեւտրական թէ ռազմական պատժամիջոցներ կիրառելով Ատրպէյճանի նկատմամբ: Ան իր խօսքի աւարտին խոստացաւ Գանատայի խորհրդարանէն ներս պաշտպանել հայ համայնքի շահերը:

Հանդիսավարը իր փակման խօսքին մէջ յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն եւ խնդրեց, որ այսուհետեւ օգտագործեն հաղորդակցութեան բոլոր հնարաւոր միջոցները եւ դիմեն դաշնակցային պատգամաւորներու գրասենեակները՝ կոչ ընելով պատասխանատուութեան ենթարկելու եւ պատժելու Ատրպէյճանը:

Անահիտ Պալեան
Լուսանկարը՝ Մայք Թաշճեան

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

facebook.com/pages/horizonweekly

@horizonweekly

horizonweekly

YouTube – Horizon Weekly TV

NOUS RECRUTONS! NOW HIRING!

Venez nous rencontrer sans rendez-vous tous les jours entre 10h00 et 14h00.
Come meet us without appointment anytime between 10:00AM and 2:00PM.

**TEMPS PLEIN / PERMANENT / FULL-TIME
DANS NOS DEUX BÂTISSSES – IN BOTH OUR FACILITIES**

PRÉPOSÉ(E) PRODUCTION – **15,50\$/H** – PRODUCTION OPERATOR
MANUTENTIONNAIRE – **16,00\$/H** – WAREHOUSE WORKER
PRÉPARATEUR DE COMMANDES – **16,00\$/H** – ORDER PICKER
CONCIERGE – **20,00\$/H** – JANITOR
CHEF DE LIGNE – **17,00\$/H** – LINE LEADER
CARISTE (SOIR) – **\$20,00/H** – FORKLIFT DRIVER (EVENING)

NOUS SOMMES ICI / WE ARE HERE
20775 RUE DAoust, STE-ANNE-DE-BELLEVUE, H9X 0A3
2945 AVE. ANDRÉ, DORVAL, H9P 1K7

Quart de travail / Work Schedule:
Lun-ven 8h00-16h30 / Mon-Fri 8:00 am - 4:30 pm
Lun-jeu 12h00-22h30 / Mon-Thu 12:00 pm - 10:30 pm
Lun-jeu 17h00-22h30 / Mon-thu 5:00 pm - 10:30 pm

Parlez-en à vos amis(es) – Talk to your friends
✓ Programme de référence / Referral program
✓ Prime pour le quart de soir / Premium for the evening shift
✓ Transport de station métro Côte-Vertu pour le site de St-Anne / Transportation from Côte-Vertu metro station for the St-Anne site

Soumettez votre candidature à cv@kdservices.ca / Send your application at cv@kdservices.ca
Appelez-nous directement au 438-354-8755 / Call us directly at 438-354-8755
Venez nous rencontrer sans rendez-vous / meet with us without appointment

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ



«ՋԱՆԱ՛
ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶՔԻՆ ԸՆՏԻՐ ԸԼԼԱԼ»

«Ջանա՛ Աստուծոյ աչքին ընտիր ըլլալ, այնպիսի մշակ մը՝ որ իր գործերուն համար ամչնալիք բան մը չունի, որպէս մէկը, որ ուղիղ կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը»: (Բ. Տմ. 2.15)

Յիսուս իր աշակերտներուն կը բացատրէր, թէ ինչպէ՛ս պէտք է ներել իր նմանին, երբ յատկապէս ան խորապէս զոյջայ իր կատարած սխալին համար:

Ան կը յորդորէ, որ երբեք չդատապարտենք ու ջանդիմանենք մեր եղբօրը, երբ ան մեղքի կամ սխալի մէջ է: Ընդհակառակը, ուղղութի՛ւն տանք, որպէսզի ան սրբագրէ իր կատարած սխալը, ապա, մեզի կը փայ միայն ու միայն ներել զինք:

Առաքեալները այս բացատրութիւնը լսելէ յետոյ, կը խնդրեն Տիրոջմէ, որ աւելցնէ իրենց հաւատքը:

Յիսուսի պատասխանը շատ պարզ ու յստակ կ'ըլլայ, Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք լեռներ կը տեղափոխէք ու հրաշքներ կը գործէք (Հմմտ. Մտ 17.20):

Հետաքրքրական է, որ Յիսուս նման պատասխանէ

մը յետոյ, կը խօսի այս անգամ ծառայի մը պարտականութիւններուն մասին: Ան կ'ըսէ. «Ենթադրենք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է, երբ ծառան դաշտէն տուն վերադառնայ, Տէրը կ'ըսէ՞ իրեն. «Շո՛ւտ գնա, ճաշդ կեր», թէ՛ «Պատրաստէ՛ ընթրիքս եւ սպասարկէ ինծի»: Շարունակելով Իր խօսքը, Ան կ'ըսէ. «Կը կարծէ՞ք որ Տէրը երախտապարտ պիտի ըլլայ ծառային. բնականաբար՝ ո՛չ»: Ծառան ընդամենը իր պարտականութիւնն է որ կը կատարէ: Ան պարտաւոր է մշտապէս ծառայել իր տիրոջ: Տէրը երբեք ծառային շնորհակալութիւն չի յայտնէր իր հրահանգները կատարելուն համար (Հմմտ Ղկ 17.7-10):


Նոյնպէս ալ, մենք Յիսուս Քրիստոսի ծառաներն ենք մեր ամբողջ կեանքի ընթացքին եւ բնականաբար պէտք է կատարենք Անոր ըսածները: Պէտք է կատարենք այն ամենը՝ ինչ որ Ան մեզի պատուիրած է: Մէկ խօսքով, պէտք է կատարենք Անոր կամքը, ո՛չ թէ Իր գովասանքին արժանանալու համար, այլ ընդունելու Անոր ողորմութիւնն ու շնորհքը:

Մենք իբրեւ քրիստոնէայ անհատներ, նոյնը պէտք է ընենք մեր նմաններուն հանդէպ: Զուրախանա՛նք մեղքի մէջ ընկղմուած մարդուն համար, ընդհակառակը՝ ճաբա՛յ ցոյց տանք, ձե՛ռք երկարենք, օգնելու անոր:

Հաւաքտով զօրացած կատարենք մեր պարտականութիւնները, առանց ակնկալութեան: Այն ինչ որ կը կատարենք հայրենիքի, ազգի, եկեղեցւոյ համար, ընենք առանց ակնկալութեան, նոյնիսկ առանց շնորհակալական խօսք մը սպասելու, որովհետեւ եթէ հաւատարիմ փառք Քրիստոսի ուսուցումներուն՝ ճշմարտապէս անոր աշակերտները եղած կ'ըլլաք (Հմմ Յհ 8. 31):

Ինչպէս որ Պօղոս առաքեալ կը շեշտէ.- «Եւ արդէն մանուկ հասակէդ գիտես Սուրբ գիրքերը, որոնք զօրութիւնը ունին քու միտքդ իմաստութեան բանալու՝ որպէսզի Քրիստոս Յիսուսի հաւատաս եւ փրկուիս: Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար. որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի գործերու»: (Բ. Տմ 3.15-17)

ՎԱՄՆ ՀՈԳԵՒՈՐ ՄՆՈՒՆԴԻ



Ամէն օր, եւ օրը օրին, Քրիստոս մեր խղճմտանքին ընդմէջէն իր խօսքը, իր կոչը կ'ուղղէ մեզի՝ մեզ արթնցնելու համար: Անդադար կը բաղխէ մեր սրտին դուռը, որպէսզի մենք տեսնենք մեր սխալը եւ այդ սխալէն նաեւ անդրադառնանք: Պատահական չէ, որ Հին եւ Նոր Կտակարանները մարդուս ներքին աշխարհին մաքրութիւնը կը կոչեն «սրտի թլփատութիւն», որ նիւթական իր պատկերացումին տակ կը նշանակէ՝ ներքին բոլոր չար տրամադրութիւնները, չար մտածելակերպը, չար խորհելակերպը, զգալու եղանակը եւ ուրիշներու հանդէպ չար վերաբերումը ամբողջութեամբ մերժել, կտրել եւ նետել, հեռացնել մեր սիրտերէն, եւ մաքրել զայն, Աստուծոյ համար իսկապէս տաճար մը դարձնելու համար: Միայն այդպիսի մաքուր տունի մը կամ տաճարի մը մէջ է, որ Աստուած կը բնակի, եւ Քրիստոս ներս կու գայ՝ մեզի հետ ընթրիք ընելու համար:

Միասին ընթրիք ընելը Աստուծոյ եւ մարդուն կողմէ փոխադարձ արարք մը կ'ենթադրէ: Աստուծոյ կողմէ, այդ ընթրիքը հրամցնելը մեզի՝ Տիրոջ կողմէ պարգեւուած Աստուծոյ խօսքն է, անոր վայելքը մեզի եւ անոր բերած բոլոր տեսակի բարիքները մեր կեանքին մէջ, որով մեր սովահար հոգիները կը կերակրէ, այնպէս՝ ինչպէս Եսայիի մարգարէութեան մէջ ալ կ'ըսէ. «Ո՛վ բոլոր ծարաւածներ, ջուրերուն եկէք. ո՛վ դրամ չունեցողներ, եկէք, ծախու առէք ու կերէք. եկէք, առանց դրամի, առանց գին վճարելու գինի ու կաթ ծախու առէք» (Ես 55.1):

Աստուծոյ ընծայածը ոչ մարմնաւոր հաց է, ոչ նիւթական ջուր, այլ՝ իր խօսքին սնուցումն է, իր անմահարար խօսքին հացն ու ջուրը, որպէսզի մեր ներքին հոգեւոր սովը անցնէ, եւ Աստուծոյ փափաքող մեր հոգին եւ սիրտը գտնեն զԱստուած եւ յագենան իրմով: Իսկ հաւատացեալին կողմէ ընծայուածը՝ Աստուծոյ կամքին կատարումն է՝ խոնարհ սրտով եւ ամբողջական հնազանդութեամբ, մայայուն գոհաբանութեամբ, օրհնութեամբ, գոհունակութեամբ, շնորհակալութեամբ եւ աղօթքով, եւ ուրիշներուն ընծայուած սիրոյ անվերապահ ծառայութեամբ:

Ասոնք են Աստուծոյ կամեցած ուտելիքը եւ սնունդը իրեն համար, այնպէս ինչպէս Քրիստոս պիտի ըսէր. «Իմ կերակուրս այն է՝ որ գործադրեմ զիս դրկողին կամքը եւ լրումին հասցնեմ անոր գործը» (Յհ 4.34): Նոյն բանը ճշմարիտ է թէ մարդուն համար եւ թէ Աստուծոյ:

Աստուծոյ կամքը կատարելը եթէ մեզի համար հոգեւոր սնունդ է, նոյնը Աստուծոյ համար մեր կողմէ իրեն հրամցուած ընթրիքն է, մեր կողմէ իրեն հրամցուած անուշահոտ Պատարագը եւ սեղանն է, եւ այս պարագային սեղանը կը դառնայ այն իսկական հաղորդութիւնը, երբ մեր Տէրը ինք եւ մենք նոյն սեղանը կը նստինք, նոյն սեղանէն ճաշակելու համար իր հոգեւոր, խորհրդական իմաստով:

Երբ մենք Աստուծոյ խոստումին եւ հրահանգին կամ պատուիրաններուն լսողը կը ժախճուինք, անպայման նաեւ իրաւունքը կ'ունենանք յաղթանակողներու խումբին մէջ դասուելու, եւ Աստուած կը խոստանայ իր փառքին եւ իր թագաւորութեան մասնակից դարձնել մեզ, որպէսզի ինչպէս Ինք յաղթեց աշխարհին՝ մենք ալ աշխարհին յաղթող ըլլանք եւ Իրեն պէս բազմինք այն գահերուն վրայ, որ մեզի պիտի ընծայէ: Իսկ գահ եւ աթոռ վստահաբար կը նշանակեն այն անվախճան, յաւիտենական, հանդերձեալ կեանքը եւ այն հանդերձեալ հանգիստը, որ Աստուած կը խոստանայ տալ բոլոր իրեններուն:

ԶԱՐԵՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ



ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 24

- Կանխասացություն Տաճարի կործանման մասին (Մտ 24.1-3)
- Սկիզբն երկանց (Մտ 24.4-14)
- Մեծ սրբապղծությունը (Մտ 24.15-28)
- Մարդու Որդիին գալուստը (Մտ 24.29-31)
- Թզենիին դասը (Մտ 24.32-35)
- Չսպասուած օրն ու ժամը (Մտ 24.36-44)
- Հաւատարիմ եւ անհաւատարիմ ծառաներ (Մտ 24.45-51)

ՏԷՐԸ, ՈՐ ՊԻՏԻ ԳԱՅ (Մտ 24.29-31, 36-44)

Քիչ հատուածներ կան, որոնք զմեզ կը կանգնեցնեն դժուարություններու առջեւ: Մատթէոսի 24.32-35 հատուածը կը նշէ, որ մարդ բնութեան նշաններէն կրնայ իմանալ գալիքը, այնպէս ալ աշխարհի նշաններէն կրնայ իմանալ, որ մօտ է Երկրորդ Գալուստը, որ տեղի պիտի ունենայ՝ այդ սերունդը դեռ չանցած՝ կ'ըսէ Յիսուս: Երկրորդը, Մատթէոսի 24.36-41 հատուածն է՝ այդ օրուայ եւ ժամուայ մասին ոչ ոք գիտէ... այլ միայն Հայրը:

Եթէ առաջին ըսուածը կը վերաբերի Երկրորդ Գալստեան, ապա այն տեղի չունեցաւ. Արդեօ՞ք Յիսուս իր մարդկային բնութեան յատուկ իմացութեամբ սահմանափակուած էր. դժուար է սա ընդունիլ: Արդեօ՞ք Յիսուսի ըսածները աւետարանիչները այլ կերպ փոխանցեցին. սա ալ կասկածելի է: Կայ երրորդ տարբերակ մը, եթէ ընդունինք, որ սա կը վերաբերի ոչ թէ Երկրորդ Գալստեան, այլ մարգարէութիւն է Երուսաղէմի անկման, որ տեղի ունեցաւ ապրող սերունդի ժամանակաշրջանին, ապա դժուարութիւնը կը վերանայ:

Այնուամենայնիւ, Մատթէոսի 24.36-41-ը յստակ կը նշէ Երկրորդ Գալուստը: Այս մասը կը պարունակէ որոշ ճշմարտութիւններ.

- Աստուծմէ բացի ոչ ոք գիտէ ժամը. հետեւաբար, յստակ կանխատեսութիւններ ընելը անարգանք է Աստուծոյ նկատմամբ. այսինքն փորձել կորզել Աստուծմէ գաղտնիք մը, որ Աստուծոյ կը պատկանի: Մարդուն գործը ոչ թէ կանխատեսումներ ընելն է, այլ պատրաստել իր անձը եւ սպասել:
 - Այս պահը պիտի գայ շատ անակնկալ անոնց վրայ, որոնք ներգրաւուած են նիւթական հարցերու մէջ, յիշեցէք Նոյի օրերը:
 - Յիսուսի գալուստով տեղի պիտի ունենայ բաժանման եւ դատաստանի պահը:
- Ասոնցմէ այն կողմ չենք կրնար անցնիլ, որովհետեւ Աստուծոյ կը պատկանի գերագոյն իմաստութիւնը:

ՊԱՏՐԱՍՏ ԸԼԼԱԼ

Յիսուս գործնական օրինակ մը կը բերէ կեանքէն, խօսելով «Հաւատարիմ եւ անհաւատարիմ ծառաներու» մասին (Առակ, Մտ 24.42-51): Ի՞նչ դասեր կը քաղենք.

1. Ապրիլ առանց զգոնութեան մեզի կը տանի աղէտի: Գողը երբեք մեզ զգուշական նամակ չի գրեր, թէ երբ պիտի գայ, անոր զէնքը անակնկալն է, բայց քրիստոնեայի պարագային Յիսուսի Գալստեան պահը, ոչ թէ սոսկումի ու վախի վիճակն է, այլ ակնկալութիւնը գալիք փառքին եւ ուրախութեան:
2. Բաւարար ու շատ ժամանակ ունենալու մասին մտածումը մեզ կը տանի աղէտի: Այս մտածումը մարդը կ'առաջնորդէ անհոգութեան եւ անտարբերութեան: Ամենավտանգաւոր մոլորութիւնը՝ «տակաւին շատ ժամանակ կայ»ի մտածումն է, այդպէս ալ մարդու կեանքին մէջ «վաղը» բառն է. ոչ ոք պետք է գործ մը ձգէ վաղուան, որովհետեւ մենք չենք գիտեր «վաղը» պիտի գա՞յ, թե՞ ոչ:
3. Դատապարտութիւնը պարտականութեան թերացման մէջ է, վարձատրութիւնը՝ հաւատարմութեան մէջ: Ծառան, որ հաւատարմօրէն իր գործը կատարեր է, անոր աւելի բարձր դիրք կը տրուի, ան որ թերացեր է, խիստ պիտի ըլլայ անոր համար ամէն ինչ: Այսպէս ալ Քրիստոսի Գալստեան պարագային:



ANC International president meets with MLA David Eby

VANCOUVER — On October 2, ARF Bureau representative and ANC International president Hagop Der Khachadourian had a working meeting in Vancouver with MLA David Eby, front running candidate for the leadership of the New Democratic Party party of British Columbia, and the presumptive Premier of BC.

During the meeting, they reflected on ANCC’s long time support of Mr. Eby as Attorney General and his reciprocal support of implementation of Armenian Genocide studies in BC.

Importantly Der Khachadourian discussed the war that Azerbaijan launched against Artsakh and Armenia, and that Canada and British Columbia must strongly condemn this escalating Azerbaijani aggression and promote Artsakh’s right to self determination.

ANCC western region representatives Hagop Deragopian and Vahakn Bedrossian were also present.

Azerbaijan is preparing a new offensive against Armenia

On September 23, the Armenian National Committee of Canada (ANCC) issued the following statement in relation to Azerbaijan’s latest large-scale aggression against the Republic of Armenia:

Following Azerbaijan’s latest large-scale aggression against the Republic of Armenia, on September 14, 2022, a fragile ceasefire was brokered, notwithstanding the high level of tensions along the border.

Despite the growing international pressure on Azerbaijan to cease all hostilities, respect the ceasefire and return to the negotiation table, the Baku dictatorship has not ceased its warmongering tactics, threatening Armenia with renewed war and violence.

On Thursday, September 15, during the emergency UN Security Council Meeting, Armenia’s permanent representative to the UN, Mher Margaryan said “There are credible reports that Azerbaijan is planning yet another military offensive by widening the geography of the aggression, including from the direction of Nakhijevan, to realize the unlawful ambitions of Azerbaijan towards establishing an extra-territorial corridor through the

sovereign territory of Armenia.”

In light of these reports, we call on Canada’s Minister of Foreign Affairs, the Hon. Melanie Joly to clearly condemn Azerbaijan’s latest aggression and continue engaging in the diplomatic process, by expressing Canada’s support for Armenia’s territorial integrity and reminding Azerbaijan that the use of force and the violation of Armenia’s territorial integrity are unacceptable.

We firmly believe that failing to contain and hold the aggressor accountable, will only embolden them to continue their violence and destruction.

As a recognized member of the international community, Armenia cannot be left alone in its fight against Azerbaijan’s Turkish-backed terror. Now is the time to stand up for human rights and the basic norms of international law and once and for all, send a clear message to Azerbaijan that the use of force will not go unpunished.

Azerbaijan confirms holding 17 Armenian POWs after latest aggression

YEREVAN—Azerbaijan has confirmed that it is holding 17 Armenian prisoners of war who were taken captive as a result of the September 13th aggression against Armenia, Deputy head of the Office of Armenia’s Representative on International Legal Affairs, Diana Karazyan told reporters on October 3, adding that the European Court of Human Rights (ECHR) urged Azerbaijan to provide details about the captives, but it, as always, has provided general information.

“At the moment the activities of the Office are directed to applying an urgent measure concerning the POWs. However, Azerbaijan is not always presenting the information required by ECHR. Azerbaijan has confirmed that it holds 17 POWs and provided very general information about them”, she said.

She said that the ECHR urged Azerbaijan to provide

details about the captives, particular about their treatment and other issues, but as always, Azerbaijan provided general information. Diana Karazyan said that this behaviour of Azerbaijan is not something new.

She also stated that there are still around 30 captives, including civilian captives, held in Azerbaijan, who were taken captive as a result of the 2020 war.

Commenting on the videos being spread by the Azerbaijani side, Communication and Prevention Program Manager at the Delegation of the International Committee of Red Cross (ICRC) to Armenia, Zara Amatuni said that ICRC, being as a neutral humanitarian organization, is not authorized to make a statement at a public platform about the incidents and videos, but added that these issues are under their constant spotlight.

(ArmenPress)

US House Speaker Nancy Pelosi condemns Azerbaijani attacks on Armenia

YEREVAN—US House of Representatives Speaker Nancy Pelosi condemned Azerbaijan’s attacks on Armenia during her momentous visit to Yerevan from September 18-19.

“Armenia is of particular importance to us because the focus on security following the illegal and deadly attacks from Azerbaijan on Armenian territory. We strongly condemn the attacks, we and our delegation, on behalf of the Congress, which threatens prospects for much needed peace,” Pelosi said during a joint press conference with Armenian National Assembly president Alen Simonyan.

In addition to explicitly blaming Azerbaijan for last week’s attacks, Pelosi said that Congress has tried to hold Turkey accountable for the ongoing Artsakh conflict.

“As the United States, which is an OSCE Minsk chair, has made long clear: there can be no military solution,” Pelosi said during the press conference. “I mentioned in our meeting earlier that for a long time, decades in Congress in a bipartisan way, we have tried to hold Turkey responsible as well as Azerbaijan for that conflict.”

Pelosi reiterated American support for a “negotiated, comprehensive and sustainable settlement” to the Artsakh conflict.

The House Speaker also referenced “hate crimes against the Armenian community” across the globe and in the United States as well as Azerbaijan’s use of force against “people and holy sites” in Artsakh.

Pelosi is the highest-ranking US official to visit the Republic of Armenia. The US-based newspaper Politico first announced on September 15 that Pelosi had decided to travel to Armenia in a show of support for the country following Azerbaijan’s large-scale attack between September 13-14. Pelosi confirmed the visit the following day, stating that the decision to take the trip was “rather spontaneous.”

Pelosi said during her visit that the trip

had been planned prior to Azerbaijan’s attacks. “But it so happens that we come in time, in-person—strongly condemn Azerbaijan’s recent attacks on Armenia,” Pelosi said while addressing Armenian civil society leaders at the Cafesjian Centre for the Arts in Yerevan.

Pelosi led a congressional delegation including co-chairs of the Congressional Caucus on Armenian Issues Frank Pallone and Jackie Speier and caucus member Anna Eshoo.

Members of the delegation referenced Armenia’s close ties with Russia and Armenia’s membership in the Collective Security Treaty Organization (CSTO), alluding to the failure of the Russian-led military bloc to provide military support to Armenia following Azerbaijan’s attacks.

“We understand that Armenia is part of this security arrangement with Russia. Now, we’re not suggesting anything about that,” Pallone said during the press conference with the Armenian parliamentary speaker. “We want to do whatever we can to be more supportive of Armenia’s security, and we’re going to work to see what can be done by the United States to help with Armenia’s security, without reference to Russia or the Russian arrangement.”

“Your interrelations with other entities is up to Armenia to decide,” Pelosi said. “It is interesting that they were disappointed that they got fact-finders and not protection from that relationship. We’ll see what happens next.”

Armenia appealed to the CSTO for military support in the hours following the start of the attack, which began shortly after midnight on September 13. The CSTO announced in response that it would send a fact-finding mission to Armenia to “assess the situation” and “prepare a report” that would be presented to CSTO member states later this year. The mission, led by CSTO head Stanislav Zas, arrived in Armenia on September 20.

Continued on page E2

Russia signals opposition to ‘extraterritorial corridor’ through Armenia

MOSCOW—Russian Deputy Prime Minister Alexei Overchuk appears to have backed the Armenian government’s position on a planned road and a railway that would connect Azerbaijan with its Nakhichevan exclave through Armenia.

In a newspaper interview published on September 30, Overchuk stressed that a Russian-Armenian-Azerbaijani task force has never discussed any “extraterritorial corridors” seemingly demanded by Azerbaijani leaders.

Armenia and Azerbaijan are to reopen their border to commercial and passenger traffic under the terms of a Russian-brokered ceasefire that stopped their six-week war for Nagorno-Karabagh in November 2020.

Azerbaijani President Ilham Aliyev has claimed that the deal calls for a permanent land corridor for Nakhichevan passing through Armenia’s Syunik province. Aliyev said last December that passage through the corridor must be exempt from Armenian border controls. Yerevan rejected his demands.

The disagreements have seriously complicated the work of the trilateral commission

dealing with practical modalities of the transport links. The commission is co-headed by Overchuk and his Armenian and Azerbaijani counterparts.

